ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2 /շարունակություն/

«ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-18/8» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 26.06.18թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարախանյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Խաչատրյան /գնահատող/

Հ. Տոնոյան /գնահատող/

Մ. Աղայանց /բացող/

Հ. Գրիգորյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

1. Գնահատման գործընթացը շարունակելու մասին

1.1 Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 25.06.18թ ստացված թիվ 03/27-1/11494-18 գրությամբ մեթոդական օժանդակությունը արձանագրել հետևյալը.

1.1.1 Հաշվի առնելով, որ <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի հայտում՝ 1-ին չափաբաժնի համար ներկայացված փաստաթղթերում բացակայում է Հավելված 4 գնային առաջարկը, իսկ <<ԷԼԻՏ ԷՍՎԵ>> ՍՊԸ-ի և <<Ինգլիշ Թրեյդ Հաուզ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում են Հավելված 4 գնային առաջարկին կից միավորի գները, մերժել <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ հայտը 1-ին չափաբաժնի, <<ԷԼԻՏ ԷՍՎԵ>> ՍՊԸ-ի և <<Ինգլիշ Թրեյդ Հաուզ>> ՍՊԸ-ի հայտերը 1-4-րդ չափաբաժինների համար և շարունակել հայտերի գնահատման նիստը:

1.1.2 Հաշվի առնելով, որ <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի հայտով 2-րդ չափաբաժնի համար ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը հրավիրել <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ /բանակցությունների/ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

2.1 Հանձնաժողովի հաջորդ՝ բանակցությունների նիստը կազմակերպել ս.թ.հունիսի 29-ին ժամը 10:00-ին ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկի, 303 սենյակ հասցեում:

Գնահատող հանձնաժողովի /բանակցությունների/ նիստը տեղի ունեցավ 29.06.2018թ. ժամը 10:00-ին

3. Գնանշման հարցման գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակիցների հետ միաժամանակյա բանակացությունների վարման մասին

3.1 <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի ներկայացուցչի բացակայության պատճառով վերջինիս կողմից 2-րդ չափաբաժնի համար հայտով առաջարկված գինը թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Տվյալներ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

4.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը.

Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնի համար

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.1-րդ կետը՝ մերժել <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի հայտը 2-րդ չափաբաժնի մասով, հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված գինը գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

4.3 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին ենթակետը գնման ընթացակարգը հայտարարել չկայացած 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

5,1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 4-րդ մասով ընդունված որոշումը՝ շարունակել հայտերի գնահատման գործընթացը ARMEPS համակարգով՝ էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան:
5,2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել <<Ֆլեշ Մոտորս>> ՍՊԸ-ի համար ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից համապատասխան եզրակացությունը ստանալուց հետո՝ հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Մ. Կարախանյան /նախագահ/

---------- Ա. Խաչատրյան

---------- Հ. Տոնոյան

---------- Մ. Աղայանց

---------- Հ. Գրիգորյան

---------- Ա. Մարգարյան /քարտուղար/